ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

<<25>> ապրիլի 2024 թ. քաղաք Մարալիկ

2024 թվականի ապրիլի 25-ին ժամը 15^{30}–ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Համայնքի ավագանու նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին փոխարինող Վաչագան Հեպոյանը:

Զեկուցողը նշեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի, համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 18-ի N 7-Ա որոշման և ավագանու կանոնակարգի համաձայն Անի համայնքի ավագանու նստաշրջանների գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր է սահմանված յուրաքանչյուր ամսի վերջին հինգշաբթին, այսինքն՝ այսօր:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, ավագանու հերթական նիստից մեկ շաբաթ առաջ հրապարակվել է ավագանու այսօրվա նիստի օրակարգի և որոշումների նախագծերը, նշվել են նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվել են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով , տեղադրվել են մարզպետարանի և համայնքի պաշտոնական համացանցային կայքերում և հրապարակային ծանուցումների www.Azdarar.am կայքում:

Զեկուցվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցում են <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության ավագանու 11 անդամները՝

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ

5. ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ԶԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ
9. ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆԸ
10. ՆԱԻՐԱ ՍԱՐՈՅԱՆԸ,
11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին անհարգելի բացակայում էին՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԳԵՎՈՐԳ ՂԶՐՈՅԱՆԸ,
2. ՍՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
3. ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ,
4. ԱՐՍԵՆ ՎԱՐՈՍՅԱՆԸ,
5. ԼՈՒԻԶԱ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԸ,
6. ԱՐՄԵՆ ՆԻԿՈՅԱՆԸ,
7. ԹԱԳՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ,
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ Անի համայնքի ավագանու անդամ՝

1. ԱՐՄԵՆԱԿ ՄԵԼՈՅԱՆԸ:

Նիստին մասնակցում էին Անիի համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ, համայնքի ներկայացուցիչներ:

Նիստը վարող՝ Արման Սարիբեկյանը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Հայտարարվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից համայնքի

ավագանու նիստին մանակցում են 11-ը, այսինքն քվորումն ապահովված է:

Անի համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Մինչև օրակարգային հարցերի քննարկումը Ա. Սարիբեկյանը տեղեկացրեց որ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 29-ի N 19-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու ընտրական իրավունքը կորցնելու հիմքով, վաղաժամկետ դադարեցվել էր <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքից Անի համայնքի ավագանու անդամ ընտրված Լիաննա Յուրիկի Բալոյանի ավագանու անդամի լիազորությունները:

Թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 10-ի N 20 արձանագրության համաձայն <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքից Անի համայնքի ավագանու անդամ ընտրված և լիազորությունները դադարեցված ավագանու անդամ Լիաննա Յուրիկի Բալոյանի ավագանու անդամի մանդատը տրվել է <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Թագուհի Սպարտակի Գևորգյանին:

Զեկուցողը շնորհավորեց Թագուհի Գևորգյանին՝ Անի համայնքի ավագանու անդամ ընտրվելու կապակցությամբ, ցանկացավ արդյունավետ և կառուցողական աշխատանք:

Զեկուցողը նշեց, որ ավագանու անդամներին սահմանված կարգով և ժամկետներում տրամադրվել են համայնքի ավագանու այսօրվա արտահերթ նիստի օրակարգը և օրակարգային հարցերի ավագանու որոշումների նախագծերը:

Համայնքի ավագանին անցավ օրակարգային հարցերի քննարկմանը.

Զեկուցողը տեղեկացրեց, որ օրենքով սահմանված կարգով և ժամկետում համայնքի ավագանու անդամներին են ուղարկվել այսօրվա նիստի օրակարգը և ավագանու որոշումների նախագծերը:

Ներկայացվեց համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.

Սաղաթելյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ15-Ի N 12-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) <<<<ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՌՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ԴՈՒԲԱՅ 7-ՕՐՅԱ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐԹՈՒՐ ՄԵԼՍԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Համայնքի ավագանու անդամ Էդիկ Ոիռուտյանը առաջարկություն ներկայացրեց, ելնելով հրատապությունից, ավագանու նիստի օրակարգում ընդրկել ևս մեկ հարց:

Տեղեկացվեց, որ 2024 թվականի ապրիլի 18-ի Ե-162Ա և 2024 թվականի ապրիլի 18-ի N 122 գրություններով Անիի համայնքապետարան են դիմել համապատասխանաբար Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի և Հայաստանի Սամբոյի ֆեդերացիայի նախագահները՝ Հայաստանի Հանրապետության սամբոյի երիտասարդների առաջնության հաղթող Սամվել Ղազարյանին՝ 2024 թվականի մայիսի 7-13-ը Սերբիայում անցկացվելիք սամբոյի Եվրոպայի պատանիների, երիտասարդների և մեծահասկաների առաջնությանը մասնակցելու, ինչպես նաև 2024 թվականին Հայաստանի Հանրապետության դեռահասների հունա-հռոմեական առաջնության մրցանակային 2-րդ տեղ զբաղեցրած Արթուր Մելքոնյանին՝ 2024 թվականի մայիսի 14-18-ը Հունաստանում անցկացվելիք Մ-15 տարեկանների ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը մասնակցելու համար դրամական աջակցություն տրամադրելու խնդրանքով: Խնդրո առարկա հարցի վերաբերյալ համայնքապետարան է ստացվել քաղաքացիներ՝ Սավել Ղազարյանի և Սաթիկ Մելքոնյանի համապատասխանաբար 2024 թվականի մարտի 20-ի և 2024 թվականի մարտի 27-ի դիմումները.

Հաշվի առնելով հացի հրատապությունը, քվեարկության կղմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով, համայնքի ավագանու կողմից առաջարկությունն ընդունվեց և օրակարգում ընդգրկվեց հետևյալ հարցը՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջարկություն ստացվեց կատարված լրացմամբ, հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու նիստի օրակարգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 7-Ա որոշումը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 25-ին ժամը 15^{30}-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ15-Ի N 12-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) <<<<ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ԴՈՒԲԱՅ 7-ՕՐՅԱ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐԹՈՒՐ ՄԵԼՍԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Օրակարգ-2

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի 1-ին եռամսյանկի կատարման արդյունքների վերաբերյալ նախագիծը և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Լրացման կարգով տեղեկացվեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով,

Հայտարարվեց՝ Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2024 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման արդյունքների մասին, համաձայն՝ N 1, N 2, N 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելվածները կցվում է արձանագրությանը:

Օրակարգ-3

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

Զեկուցողը համայնքի ավագանու քննարկմանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 113-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Քննարկման արդյունքում առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 113-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (Ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի «3000.0» թիվը փոխարինել «7500.0» թվով:

2) Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 04 (Այլ մշակութային կազմակերպություններ) և տնտեսագիտական դասակարգման 5122 (Վարչական սարքավորումներ) հոդվածի «0» թիվը փոխարինել «1000.0» թվով:

3) Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (Ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «177331.4» թիվը փոխարինել «171831.4» թվով:

4) Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 03, դաս 01 (Սան. մաքրում) և տնտեսագիտական դասակարգման 4264 (Տրանսպորտային նյութեր) հոդվածի «10000.0» թիվը փոխարինել «20000.0» թվով:

5) Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 01 (Ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «12500.0» թիվը փոխարինել «7500.0» թվով:

6) Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 01, դաս 02 (Պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածի «18000.0» թիվը փոխարինել «13000.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-4</u>

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման, քննարկման և հաստատման կարգի>> 12-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>> պարբերության համաձայն համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում համայնքներում նախընտրելի համարվող սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու հարցը համաձայնեցվում է համայնքի ավագանու հետ:

Քննարկումների և հանրային լսումների արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի բյուջեի ֆինանսական հնարավորությունը, Անի համայնքում 2025 թվականին նախընտրելի է համարվում իրականացնել հետևյալ սուբվենցիոն ծրագրերը.

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2025 թվականին նախատեսված սուբվենցիոն ծրագրերի

Հ/հ	Ծրագրի անվանումը	Համայնքի շահառու հանդիսացող բնակավայրերը	Իրականացվելիք աշխատանքների հակիրճ նկարագրությունը
1.	Անի համայնքի Ձիթհանքով, Մարալիկ, Լանջիկ բնակավայրերի ներբնակավայրային փողոցների և Սառնաղբյուր, Շիրակավան բնակավայրեր տանող ճանապարհների ասֆալտապատում	Քաղաք Մարալիկ, Ձիթհանքով, Լանջիկ, Սառնաղբյուր, Շիրակավան գյուղական բնակավայրեր	Ծրագրով նախատեսվում է ասֆալտապատել՝ Ձիթհանքով բնակավայրի ներբնակավայրային 3-րդ փողոցի 716 գծ. մետր երկարության հատվածը. Մարալիկ քաղաքի ներբնակավայրային Երիտասարդական փողոցի 762 գծ. մետր երկարության հատվածը. Լանջիկ բնակավայր մտնող կենտրոնական 1-ին և 2-րդ փողոցների 1220 գծ. մետր երկարության հատվածը. Սառնաղբյուր բնակավայր տանող ճանապարհների 1700 գծ. մետր հատվածը. Շիրակավան բնակավայրեր մտնող ճանապարհների 600 գծ. մետր երկարության հատվածը.
2.	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Սարակապ բնակավայրի խմելու ջրի համակարգի կառուցում, սահմանամերձ Բագրավան-Անիավան-Անիպեմզա բնակավայրերը սնուցող մայր ջրատարի անցկացում:	Սարակապ Բագրավան-Անիավան, Անիպեմզա բնակավայրեր	**<u>Բաղադրիչ-1</u>** Ծրագրով նախատեսվում Անի համայնքի Սարակապ բնակավայրում կառուցել խմելու ջրի ներտնտեսային համակարգ: Վերականգնել օրական կարգավորման 2 ջրամբարները, անցկացնել 6000 գծ.մ ընդհանուր երկարության ներքին ցանց, տեղադրել կարգավորիչ փականներ և ջրաչափական սարքեր: **<u>Բաղադրիչ-2</u>** Ծրագրով նախատեսվում է Բագրավան բնակավայրում գործող խորքային հորի ջրաղբյուրից անցկացնել Անիավան և Անիպեմզա բնակավայրերը սնուցող Դ 120 մմ տրամաչափի 6500 գծ. մետր ընդհանուր երկարության նոր ջրատար: Վերանորոգել Անիավան բնակավայրի 300 խոր. մետր և Անիպեմզա բնակավայրի 500 խոր. մետր տարողության օրական կարգավորման ջրամբարները, տեղադրել կարգավորիչ և հետադարձ փականներ:
3.	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի բազմաբնակարան բնակելի շենքերի	Անիավան բնակավայր	Ծրագրով նախատեսվում է վերանորոգել Անիավան բնակավայրի թվով 3 բազմաբնակարանային բնակելի շենքերի տանիքներ, ընդամենը՝ 2116 քառ. մետր:

	տանիքների վերանորոգում		

Համայնքի ավագանու անդամ Արտակ Շաբոյանի կողմից առաջարկություն ստացվեց նախագծում նախատեսված Սառնաղբյուր բնակավայրեր տանող ճանապարհների 1700 գծ. մետր հատվածքի ասվալտապատումը փոխարինել՝ 800 գծ. մետր Սառնաղբյուր բնակավայրեր տանող ճանապարհների ասֆալտապատում, իսկ մնացած 900 գծ. մետր ասֆալտապատումը նախատեսել Սառնաղբյուրի ներբնակավայրարյին թիվ 9-րդ փողոցի ասֆալտապատում: Առաջարկությունը հիմնավորվեց նրանով, որ բնակավայր տանող ճանապարհի վերջնամասի 900 գծ. մետր հատվածը գտնվում է համեմատաբար բարվոք վիճակում և հրատապ անհրաժեշտություն է խիտ բնակեցված թիվ 9 փողոցի ասֆալտապատումը:

Ներկայացված առաջարկությունն ընդունվեց համայնքի ավագանու կողմից և առաջարկվեց, որոշման նախագծում կատարել համապատասխան փոփոխություն:

Քննարկման արդյունքում առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը՝ ներկայացված փոփոխությամբ:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման, քննարկման և հաստատման կարգի>> 12-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>> պարբերությունը, Անի համայնքում ծրագրեր իրականացնելու նպատակով 2024 թվականի ապրիլի 15-ին կազմակերպված հանրային լսումների վերաբերյալ կազմված արձանագրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2025 թվականներին սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2024 թվականի
ապրիլի 25-ի N 51-Ա որոշման

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2025 թվականին նախատեսված սուբվենցիոն ծրագրերի

Հ/հ	Ծրագրի անվանումը	Համայնքի շահառու հանդիսացող բնակավայրերը	Իրականացվելիք աշխատանքների հակիրճ նկարագրությունը
1.	Անի համայնքի Ձիթհանքով, Մարալիկ, Լանջիկ բնակավայրերի ներբնակավայրային փողոցների և Սառնաղբյուր, Շիրակավան բնակավայրեր տանող ճանապարհների ասֆալտապատում	Քաղաք Մարալիկ, Ձիթհանքով, Լանջիկ, Սառնաղբյուր, Շիրակավան գյուղական բնակավայրեր	Ծրագրով նախատեսվում է ասֆալտապատել՝ Ձիթհանքով բնակավայրի ներբնակավայրային 3-րդ փողոցի 716 գծ. մետր երկարության հատվածի ասֆալտապատում. Մարալիկ քաղաքի ներբնակավայրային Երիտասարդական փողոցի 762 գծ. մետր երկարության հատվածի ասֆալտապատում. Լանջիկ բնակավայր մտնող կենտրոնական 1-ին և 2-րդ փողոցների 1220 գծ. մետր երկարության հատվածի ասֆալտապատում. Սառնաղբյուր բնակավայր տանող ճանապարհների 800 գծ. մետր հատվածի և ներբնակավայրային թիվ 9 փողոցի 900 գծ. մետր հատվածի ասֆալտապատում. Շիրակավան բնակավայրեր մտնող ճանապարհների 600 գծ. մետր երկարության հատվածի ասֆալտապատուն.
2.	ՀՀ·Շիրակի մարզի Անի համայնքի Սարակապ բնակավայրի խմելու ջրի համակարգի կառուցում, սահմանամերձ Բագրավան-Անիավան-Անիպեմզա բնակավայրերը սնուցող մայր ջրատարի անցկացում:	Սարակապ Բագրավան-Անիավան, Անիպեմզա բնակավայրեր	**<u>Բաղադրիչ-1</u>** Ծրագրով նախատեսվում Անի համայնքի Սարակապ բնակավայրում կառուցել խմելու ջրի ներտնտեսային համակարգ: Վերականգնել օրական կարգավորման 2 ջրամբարները, անցկացնել 6000 գծ.մ ընդհանուր երկարության ներքին ցանց, տեղադրել կարգավորիչ փականներ և ջրաչափական սարքեր: **<u>Բաղադրիչ-2</u>** Ծրագրով նախատեսվում է Բագրավան բնակավայրում գործող խորքային հորի ջրաղբյուրից անցկացնել Անիավան և Անիպեմզա բնակավայրերը սնուցող Դ 120 մմ տրամաչափի 6500 գծ. մետր ընդհանուր երկարության նոր ջրատար: Վերանորոգել Անիավան բնակավայրի 300 խոր. մետր և Անիպեմզա բնակավայրի 500 խոր. մետր տարողության օրական կարգավորման ջրամբարները, տեղադրել կարգավորիչ և հետադարձ փականներ:

3.	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում	Անիավան բնակավայր	Ծրագրով նախատեսվում է վերանորոգել Անիավան բնակավայրի թվով 3 բազմաբնակարանային բնակելի շենքերի տանիքներ, ընդամենը՝ 2116 քառ. մետր:

Օրակարգ-5

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 12-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ավագնու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 12-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 108-Ա և 2024 թվականի փետրվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 108-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին >> N 2-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու և Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը կրկին հաստատելու անհրաժեշտությունը առաջացել է այն հանգամանքով, որ օրենսդրությամբ սահմանված ժամկետում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը չի ներկայացվել լիազոր մարմնի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը:

Որի վերաբերյալ համայնքապետարան է ստացվել Շիրակի մարզպետի 2024 թվականի ապրիլի 17-ի N 01//03622-2024 գրությունը, կապված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի ապրիլի 9-ի N ԳՍ/15.4/11058-2024 հանձնարարականի հետ:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 34-րդ

հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով:

Քննարկման արդյունքում առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը՝ ներկայացված փոփոխությամբ:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 12-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի ապրիլի 17-ի N 01//03622-2024 գրությունը, կապված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի ապրիլի 9-ի N ԳՍ/15.4/11058-2024 հանձնարարականի հետ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին կետը և 2-րդ կետով նախատեսված համայնքային ծառայության պաշտոնների մասով կատարված փոփոխությունները ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

5. Սույն որոշումն 2-րդ կետով հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային քաղաքական, համայնքային

հայեցողական պաշտոնների, տեխնիկական սպասարկում և քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմի մասով որոշումն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

6. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքի ավագնու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 12-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 108-Ա և 2024 թվականի փետրվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 108-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին >> N 2-Ա որոշումները:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

N 1 և N 2 հավելվածները կցվուն են արձանագրությանը:

<u>Օրակարգ-6</u>

6) <<<<ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ԴՈՒԲԱՅ 7-ՕՐՅԱ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ 2024 թվականի ապրիլի 10-ի գրությամբ, Անիի համայնքապետարան է կրկին դիմել <<<<Հակոբյաններ>> Համահայկական մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահը՝ Անի համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ 15 աշակերտներին, որպես խրախուսանք և մեկ պատասխանատուի դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայությունն ապահովելու համար համայնքի բյուջեից **3 404 800** ՀՀ դրամ հատկացնելու խնդրանքով: Ըստ ներկայացված գրության 25 տոկոսով նվազեցվել են մեկ երեխայի հաշվարկով նախատեսված ծախսերը, որը կազմում է 190 հազ. դրամ, ավելացնելով 12 տոկոս հարկեր:

Ավագանու նախորդ նիստին այս հարցը քննարկվել է և մեկ երեխայի հաշվով ներկայացված ծախսերը ոչ արժանահավատ համարելու հիմքով, ընդունված որոշմամբ, մերժվել է գումարի հատկացումը:

Առաջարկվեց ավագանու անդամներին՝ կարծիք ներկայացնել խնդրո առարկա հարցի վերաբերյալ:

Արտահայտվեցին.

Ավագանու անդամներ՝ Հասմիկ Զատիկյանը, Նաիրա Սարոյանը, Էդիկ Ուռուտյանը, Ժիրայր Ալեքյանը:

Քննարկման արդյունքում նպատակահարմար չհամարվեց Անի համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ 15 աշակերտներին, որպես խրախուսանք և մեկ պատասխանատուի դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայությունն ապահովելու համար համայնքի բյուջեից **3 404 800** ՀՀ դրամի հատկացումը:

Քվեարկության կողմ՝ 0, դեմ՝ 10, ձեռնպահ՝ 1 արդյունքներով գումարի հատկացումը մերժվեց:

<<<<ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի՝ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ԴՈՒԲԱՅ 7-ՕՐՅԱ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշումը, հաշվի առնելով համայնքի բյուջեի ֆինանսական սահմանափակ հնարավորությունները և այն, որ <<<<Հակոբյաններ>> Համահայկական մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահի 2024 թվականի ապրիլի 10-ի գրությամբ հիմնավորված չեն համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայության համար հայցվող գումարի չափը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Մերժել <<<<Հակոբյաններ>> Համահայկակն մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ Ս. Հակոբյանի 2024 թվականի ապրիլի 10-ի դիմումը՝ Անի համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայությունն ապահովելու համար դրամական հատկացում կատարելու վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ- 7</u>

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐԹՈՒՐ ՄԵԼՍԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց , որ քաղաքացի Արթուր Մելսիկի Կարապետյանը,մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ Հ. Շիրազի փողոց 42/10 հասցեում գտնվող Անի համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության **0,00557** հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցել և շահագործում է **55,68** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ քարաշեն շինություն՝ ավտոտնակ:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ինքնակամ շինությունը ճանաչվել է օրինական և անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է համայնքի սեփականության իրավունքը:

Քաղաքացին դիմել է Անիի համայնքապետարան նշված անշարժ գույքը գնման նախապատվության իրավունքով իրեն օտարելու խնդրանքով :

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, տրված՝ 2023-12-29 ծածկագիր՝ 2023CTRQJF:Օտարման ենթակա գումարի չափը կազմում է **101354 (մեկ հարյուր մեկ հազար երեք հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:**

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով, ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐԹՈՒՐ ՄԵԼՍԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, տրված՝ 2023-12-29 ծածկագիր՝ 2023CTRQJF, հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Արթուր Մելսիկի Կարապետյանը, իր 2024 թվականի հունվարի 8-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **55,68** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության 08-003-0020-0193 կադաստրային ծածկագրով **0,00557** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական 12042024-08-077, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շիրազի փողոց 42/10 ավտոտնակ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **55,68** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0020-0193 կադաստրային ծածկագրով **0,00557** հեկտար մակերեսով հողամասը (Վկայական 12042024-08-077, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շիրազի փողոց 42/10 ավտոտնակ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **101354 (մեկ հարյուր մեկ հազար երեք հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ** ընդհանուր արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Արթուր Մելսիկի Կարապետյանին /Անձնագիր՝ AS0547904, տրված՝ 26.03.2019թ, 099-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, ք. Մարալիկ, Շիրազի փողոց շենք 42, բն. 2):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգ- 8

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունն առաջացել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 2-ի N 631 որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 12-րդ, 14-րդ կետերի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Որոշման նախագծով նախատեսվում է հանձնաժողովի կազմում ընդգրկել համայնքապետարանի իրավաբան՝ Աստղիկ Նիկողոսյանին՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

Լուսինե Գրիգորյանը հանձնաժողովի կազմում է ընդգրկվել, որպես Միասնական սոցիալական ծառայության Մարալիկի տարածքային կենտրոնի ավագ սոցիալական աշխատող, իսկ ներկայումս նա զբաղեցնում է Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնը.

Որոշման ընդունումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 2-ի N 631 որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 12-րդ, 14-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով:

Քննարկման արդյունքում առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 2-ի N 631 որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 12-րդ, 14-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 3-րդ մասի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 24-ի <<հայաստանի հանրապետության շիրակի մարզի անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին կից խնամակալության եվ հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու եվ հայաստանի հանրապետության շիրակի մարզի անի համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի N 14-Ա որոշումը ուժը կորցրած ճանարելու մասին>> N 26-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

1) Որոշման 1-ին կետում ավելացնել հանձնաժողովի նոր անդամ, հետևյալ խմբագրությամբ՝ <<Աստղիկ Նիկողոսյան – Անիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ>>.
2) Որոշման 1-ին կետում նշված <<Միասնական սոցիալական ծառայության Մարալիկի տարածքային կենտրոնի ավագ սոցիալական աշխատող /համաձայնությամբ/>>

բառակապակցությունը փոխարինել <<Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար>> բառակապակցությամբ.

3) Որոշման 1-ին կետում նշված <<1-ին կարգի>> և <<2-րդ կարգի>> բառակապակցությունները փոխարինել համապատասխանաբար <<առաջատար>> բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգ- 9

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ 2024 թվականի ապրիլի 18-ի Ե-162Ա և 2024 թվականի ապրիլի 18-ի N 122 գրություններով Անիի համայնքապետարան են դիմել համապատասխանաբար Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի և Հայաստանի Սամբոյի ֆեդերացիայի նախագահները՝ Հայաստանի Հանրապետության սամբոյի երիտասարդների առաջնության հաղթող Սամվել Ղազարյանին՝ 2024 թվականի մայիսի 7-13-ը Սերբիայում անցկացվելիք սամբոյի Եվրոպայի պատանիների, երիտասարդների և մեծահասկաների առաջնությանը մասնակցելու, ինչպես նաև 2024 թվականին Հայաստանի Հանրապետության դեռահասների հունա-հռոմեական առաջնության մրցանակային 2-րդ տեղ զբաղեցրած Արթուր Մելքոնյանին՝ 2024 թվականի մայիսի 14-18-ը Հունաստանում անցկացվելիք Մ-15 տարեկանների ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը մասնակցելու համար դրամական աջակցություն տրամադրելու խնդրանքով:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ համայնքապետարան է ստացվել քաղաքացիներ՝ Սավել Ղազարյանի և Սաթիկ Մելքոնյանի համապատասխանաբար 2024 թվականի մարտի 20-ի և 2024 թվականի մարտի 27-ի դիմումները.

Հաշվի առնելով հարցի լուծման հրատապությունը, համայնքի ավագանու անդամ Էդիկ ՈՒռուտյանի առաջարկությամբ հարցը ընդրկվել է նիստի օրակարգում:

Առաջարկություն ներկայացվեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել՝ 2024 թվականին Հայաստանի Հանրապետության սամբոյի երիտասարդների առաջնության հաղթող Սամվել Ղազարյանին՝ 2024 թվականի մայիսի 7-13-ը Սերբիայում անցկացվելիք սամբոյի Եվրոպայի պատանիների, երիտասարդների և մեծահասկաների առաջնությանը մասնակցելու ծախսերը հոգալու համար, իսկ նույն հոդվածից 200 000 /երկու հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել՝ 2024 թվականին Հայաստանի Հանրապետության դեռահասների հունա-հռոմեական առաջնության մրցանակային 2-րդ տեղ զբաղեցրած Արթուր Մելքոնյանին՝ 2024 թվականի մայիսի 14-18-ը Հունաստանում անցկացվելիք Մ-15

տարեկանների ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը մասնակցելու ծախսերը հոգալու համար /անձնագիր՝ AL0409289, տրված՝ 30.08.2023թ., 022-ի կողմից, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, ք. Մարալիկ 1-ին թաղամաս, շենք 2, բն. 36 /:

Քննարկման արդյունքում առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները>>, հաշվի առնելով Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի 2024 թվականի ապրիլի 18-ի Ե-162, Հայաստանի Սամբոյի ֆեդերացիայի 2024 թվականի ապրիլի 18-ի N 122 գրությունները, քաղաքացիներ՝ Սավել Ղազարյանի և Սաթիկ Մելքոնյանի համապատասխանաբար 2024 թվականի մարտի 20-ի և 2024 թվականի մարտի 27-ի դիմումները.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի՛ Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել՝ 2024 թվականին Հայաստանի Հանրապետության սամբոյի երիտասարդների առաջնության հաղթող Սամվել Ղազարյանին՝ 2024 թվականի մայիսի 7-13-ը Սերբիայում անցկացվելիք սամբոյի Եվրոպայի պատանիների, երիտասարդների և մեծահասկաների առաջնությանը մասնակցելու ծախսերը հոգալու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ 200 000 /երկու հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել՝ 2024 թվականին Հայաստանի Հանրապետության դեռահասների հունա-հռոմեական առաջնության մրցանակային 2-րդ տեղ զբաղեցրած Արթուր Մելքոնյանին՝ 2024 թվականի մայիսի 14-18-ը Հունաստանում անցկացվելիք Մ-15 տարեկանների ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը մասնակցելու ծախսերը հոգալու համար /անձնագիր՝ AL0409289, տրված՝ 30.08.2023թ., 022-ի կողմից, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, ք. Մարալիկ 1-ին թաղամաս, շենք 2, բն. 36 /:

3. Հաշվի առնելով, որ Արթուր Մելքոնյանն անչափահաս է, սույն որոշման 2-րդ կետով նախատեսված գումարը հատկացնել ծնողին՝ Սաթիկ Կարապետի Մելքոնյանին /անձնագիր՝ AT 0430377, տրված՝ 14.05.2020թ, 001-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Սառնաղբյուր, փողոց 1, անց. 1, տուն 3/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Նիստը վարող Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

Շնորհակալություն հայտնվեց՝ նիստի մասնակցության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<25>> ապրիլի 2024 թ.
քաղաք Մարալիկ

Արձանագրեց՝
ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Հեպոյանը

<<25>> ապրիլի 2024 թ.
քաղաք Մարալիկ